Սիրելի՛ հյուրեր, համաժողովի հարգելի՛ մասնակիցներ

Թույլ տվեք ՀՀ կառավարության և անձամբ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի կողմից ողջունել «Մեկ տարածաշրջան, մեկ առողջություն» խորագրով անցկացվող տարածաշրջանային համաժողովի մասնակիցներին և ցանկանալ ստեղծագործական և արդյունավետ աշխատանք:

Թույլ տվեք միաժամանակ ողջունել մեր սիրելի հարևաններին՝ Վրաստանի պատվիրակությանը, ինչպես նաև երախտիքի խոսքեր ուղղել Ավստրիական Զարգացման գործակալությանը, Հայաստանում գործող՝ «ՔԱՐԴ» և Վրաստանում գործող՝ «ՀԵՅՖԵՐ» կազմակերպությունների ներկայացուցիչներին և տարբեր երկրներից հրավիրված մասնագետներին՝ այս միջազգային համաժողովի կայացմանը ակտիվ աջակցություն ցուցաբերելու համար:

Այս համաժողովը հերթական քայլն է մեր երկու բարեկամական երկրների միջև ձևավորված բարիդրացիական հարաբերությունները էլ ավելի սերտացնելու ուղղությամբ: Կասկած չկա, որ այն նոր հնարավորություններ կընձեռի համագործակցության տիրույթում մի նոր ոլորտ ևս ներգրավվելու համար: Եվ անասնաբուծությունը կարող է հանդիսանալ գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը:

Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներից է գյուղատնտեսության ներդաշնակ զարգացումը և կառավարության կողմից առաջիկայում աջակցություն կցուցաբերվի նաև անասնաբուծության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերին: Մեր երկրում կարևորվում է կենդանիների առողջության պահպանումը և պետական աջակցությամբ 10 հիվանդությունների նկատմամբ իրականացվում են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է նաև գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման գործընթացը, որի իրականացումը կտրուկ կբարձրացնի անասնաբուժական և տոհմասելեկցիոն աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության մակարդակը:

Համաժողովի հարգելի՛ մասնակիցներ, սիրելի՛ հյուրեր, ես ցանկանում եմ կրկին անգամ ողջունել համաժողովի մասնակիցներին, շնորհակալություն հայտնել կազմակերպիչներին և ցանկանալ բեղմնավոր աշխատանք:

Շնորհակալություն